ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2024 թվականի N 240-Ա

«ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 2021 թվականի փետրվարի 18-ին ստորագրված «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» թիվ 9202-ԱՄ համաձայնագիրը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ավելացնել «Վայոց ձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը՝ 2,251,430,000.0 դրամով, լրացուցիչ 450,286 հասարակ բաժնետոմսեր թողարկելու և տեղաբաշխելու միջոցով՝ յուրաքանչյուրը 5,000.0 դրամ արժեքով՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր, Եղեգնաձոր քաղաք, Ջորավար Վարդան փողոց 12/1 հասցեում գտնվող, նորակառույց մասնաշենքի արժեքով՝ 2,218,801,250.0 դրամով, ինչպես նաև նորակառույց մասնաշենքը սպասարկող 1.13 հա հողատարածքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքով՝ 32,628,750.0 դրամով (պետական գրանցման վկայական՝ թիվ թիվ 24012024-10-0003):

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել «Գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սույն որոշման 1-ին կետով նախատեսված գույքի գնահատումը, ինչպես նաև «Վայոց ձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը, կանոնադրության մեջ համապատասխան փոփոխության կատարումը և օրենքով սահմանված կարգով գրանցումը.

2) սույն որոշման 1-ին կետով նախատեսված գույքի նկատմամբ «Վայոց ձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցման ծախսերն իրականացնել «Վայոց ձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ